

վարկված շրջանառության ծավալները գումարենք ստացվում է, որ միջին հաշվով շրջանառությունում կա մոտ **3.9-4.0 մլրդ ԱՄՆ դոլարի** կանխիկ արտարժույթ:

Համեմատության համար նշենք, որ դեմոսինացիայի արտամղման մեթոդով գնահատվել է նաև **2007թ. հոկտեմբերի դրությամբ** շրջանառությունում կանխիկ արտարժույթը՝ մոտ **1 մլրդ 917 մլն ԱՄՆ դոլար** մեծ անվանական արժեքով թղթադրամներով և մոտ **2 մլրդ 396 մլն ԱՄՆ դոլար** մանր թղթադրամների շրջանառությունը ներառյալ:

ԱՆՆԱ ՄԱԿԱՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ

ՃԳՆԱԺԱՄԻ ՄԱԿՐՈՏԵՍԵՍԱԿԱՆ ԱԶԳԵՅՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ

Կախված նրանից, թե զարգացման որ փուլում է գտնվում երկիրը՝ համաշխարհային կամ այլ երկրից փոխանցված ճգնաժամի առաջացումը տվյալ երկրում պայմանավորվում է կապիտալ և ընթացիկ հաշիվների շոկերով: Միջինից բարձր եկամուտներ ունեցող զարգացող երկրներում դա հիմնականում պայմանավորված է կապիտալի հաշվի շոկերով (փոխանցման մեխանիզմ՝ կապիտալի հոսքերը (պորտֆելային և օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալների կրճատում): Իսկ ցածր եկամուտներ ունեցող երկրներում, որտեղ արժեթղթերի շուկան թերզարգացած է կամ սահմանային դեր է խաղում, ընթացիկ հաշվի շոկերն են ճգնաժամի պատճառ հանդիսանում (փոխանցման մեխանիզմ՝ համաշխարհային պահանջարկի կրճատում և հումքի (գյուղմթերք (անմշակ), գումաքի մետաղներ և այլ օգտակար հանածոներ) գների անկում («առևտրի» և «վճարային հաշվեկշռի» ուղիներ), ինչպես նաև աշխատող միգրանտների նկատմամբ պահանջարկի կրճատում («տրանսֆերտների» մեխանիզմ): Այս տիպի զարգացող երկրներում ընթացիկ հաշվի շոկերը կամ ճշգրտումները պատճառ են հանդիսանում տեղական արժույթի արժեզրկման կամ սովորական արժույթային ճգնաժամի¹: Մի շարք հետազոտողներ որպես արժույթային ճգնաժամի սկիզբ կամ տարի են ընդունում տեղական արժույթի արժեզրկման որոշակի չափը², իսկ Լին և Ռեհի³ որպես սկիզբ ընդունում են այն պահը, երբ ԱՄՆ-ն աջակցություն է տրամադրում որևէ երկրի՝ անկախ նրանից ճգնաժամը սկսվել է այդ երկրում կամ հիմնադրամը ճգնաժամը կանխելու նպատակով նախօրոք վարկ է տրամադրում: Իսկ մակրոտնտեսական ազդեցությունը գնահատելիս սովորաբար կիրառվում է «պատուհանի» սկզբունքը, երբ ճգնաժամից հետո արձանագրված մակրոտնտեսական փոփոխականների արժեքները (մեծությունները) համեմատվում են նախքան ճգնաժամը գրանցված արդյունքների հետ:

¹ Bleaney, Michael (2005). “The Aftermath of a Currency Collapse: How Different are Emerging Markets?” *The World Economy*, Volume 28, Issue 1, pp. 79-81.

² Reinhart, Carmen, and Rogoff, Kenneth (2009). *This Time is Different: Eight Centuries of Financial Folly*, Princeton University Press, Princeton, New Jersey: United States, pp. 5-6, Frankel, Jeffrey, and Rose, Andrew. (1996), “Currency Crashes in Emerging Markets: An Empirical Treatment”, US Federal Reserve Board's International Finance Discussion Papers, Working Paper 534, New York, NY, US Federal Reserve Board, Washington, DC, p. 4, <http://www.federalreserve.gov/pubs/ifdp/1996/534/ifdp534.pdf> (last accessed: September 18, 2010), Milesi-Ferretti, Gian Maria and Razin, Assaf, (1998). “Current Account Reversals and Currency Crises: Empirical Regularities”, IMF Working Paper 98/89, Washington: International Monetary Fund, p. 22, <http://www.imf.org/external/pubs/ft/wp/wp9889.pdf> (last accessed: September 20, 2010) և այլն:

³ Lee, Jong-Wha and Rhee, Changyong (2002), “Macroeconomic Impacts of the Korean Financial Crisis: Comparison with the Cross-country Patterns”, Volume 25, Issues 4, pp. 541-542

Համաշխարհային տնտեսական անկումը ուղեկցվում է «հումք» խմբի գների իջեցմամբ համաշխարհային շուկայում, որը համեմատաբար երկարատև բնույթ է կրում¹: Հաշվի առնելով այն, որ այս խմբի ապրանքների 2 խմբերը («ոչ թանկարժեք մետաղներ և իրեր դրանցից» և «հանքահումքային մթերք») 2007թ. կազմել են ՀՀ արտահանման 49.8%², ապա համաշխարհային շուկայում գների անկումը կրճատելու էր ՀՀ արտահանման ծավալները, քանի որ «հանքանյութ (օգտակար հանածոներ), հանքաքար և մետաղներ» խմբի գների ինդեքսը (ԱՄՆ ընթացիկ դոլարով արտահայտված) 2008թ. հոկտեմբերին սեպտեմբերի³ նկատմամբ մոտ 20% անկում գրանցեց, իսկ դեկտեմբերին՝ 38% անկում⁴: Ռուսաստանում, որը նավթի խոշոր արտահանողներից մեկն է, ևս մույն միտումն էր գրանցվելու, քանի որ «ամնշակ նավթ» խմբի միջին կշռված գների ինդեքսը (ԱՄՆ ընթացիկ դոլարով արտահայտված) 2008թ. հոկտեմբերին նախորդ ամսվա նկատմամբ մոտ 27% անկում գրանցեց⁵, ինչպես նաև արձանագրվելու էր կապիտալ հաշվի շոկ: Վատթարացող տնտեսական վիճակը միգրանտների համար աշխատաշուկա համարվող երկրներում (հիմնականում Ռուսաստան), ինչպես նաև մեծ սփյուռքի համայնք ունեցող երկրներում հանգեցնելու էր տրանսֆերտների ծավալների կրճատման, իսկ արտահանման շուկաների տեսակետից արտահանման կրճատում: Հետևաբար, ՀՀ-ում ճգնաժամը հիմնականում պայմանավորված է եղել ընթացիկ հաշվի շոկերով, որի մասին նաև փաստում է ՄԱԿ-ի Աղքատության և սոցիալական ազդեցության խումբը (ըստ որի տեղի է ունեցել 3 միաժամանակյա շոկ՝ արտահանման պահանջարկի կրճատում, արտահանվող հումքի գների անկում և մասնավոր կապտալ հոսքերի և տրանսֆերտների կրճատում)⁶: Այս շոկերն իրենց հերթին հանգեցրել են տեղական արժույթի արժեզրկման կամ արժութային ճգնաժամի (ՀՀ դրամի 2009թ. արձանագրված արժեզրկման չափը ԱՄՆ դոլարի նկատմամբ ըստ Ռեյնհարթի և Ռոգոֆֆի «արժութային ճգնաժամի» սահմանմամբ⁷ այդ փոփոխությունը համարվում է որպես արժութային ճգնաժամ):

ՀՀ-ում համապարփակ ձևով ճգնաժամի մակրոտնտեսական ազդեցությունը ներկայացվել է Վ. Հարությունյանի և Վ. Խաչատրյանի կողմից (2010թ)⁸: Սակայն հեղինակներն ընդգրկում են մակրոտնտեսական ցուցանիշների ավելի լայն շրջանակ և այդ ցուցանիշների փոփոխությունները դիտարկում են ավելի կարճ ժամանակահատվածում: Սակայն այս հոդվածում դիտարկվում են այն մակրոտնտեսական ցուցանիշների փոփոխությունները, որոնք ընդհանուր են բոլոր տիպի ճգնաժամների պարագայում (պետական պարտքի փոփոխություն, իրական ՀՆԱ-ի աճի տեմպ, գործազրկության մակարդակ, միջին ամսական աշխատավարձ) և որոնք հատուկ են արժութային ճգնաժամներին (զնաճ), ինչպես նաև

¹ Freund, Caroline. (2008), “The Trade Response to Global Downturns: Historical Evidence” World Bank, Policy Research Working Paper 5015, World Bank: Washington, DC, pp. 3, 11.

http://www-wds.worldbank.org/external/default/WDSCContentServer/IW3P/IB/2009/08/06/000158349_20090806152233/Rendered/PDF/WPS5015.pdf (last accessed: March 29, 2010)

² Աղբյուր՝ ԱՎԾ, 2011թ. Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2009 թվականին՝ ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացուցակի 2-նիշ դասակարգման:

http://www.armstat.am/file/article/ft_2nish_09_8.pdf (վերջին այցելություն՝ 2011թ. մարտի 30):

³ Այդ պահին արձանագրվեց բուն համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի սկիզբը (նաև անվանում են «Լեհման»-ի շոկ): 2008թ. սեպտեմբերի 15-ին «Lehman Bros.» ընկերության սնանկությունը մի շարք երկրներում շոկերի պատճառ հանդիսացավ: Աղբյուր՝ <http://www.newsweek.com/2009/09/14/the-lehman-shock.html> (last accessed: March 24, 2011).

⁴ Աղբյուր՝ «UNCTAD Commodity Price Statistics» աղանց տվյալների բազա, 2011 (վերջին այցելություն՝ 2011թ. մարտի 29):

⁵ Նույն տեղում:

⁶ UNDP. (2010), “Poverty and Social Impact Analysis of the Global Economic Crisis: Synthesis Report of 18 Country Studies”, New York, USA: United Nations Development Program, p. 6, http://www.undp.org/poverty/projects_psia_economic_crisis.shtml (last accessed: March 15, 2011)

⁷ Reinhart, Carmen, and Rogoff, Kenneth (2009). This Time is Different: Eight Centuries of Financial Folly, Princeton University Press, Princeton, New Jersey: United States, p. 6.

⁸ Հարությունյան Վ., Խաչատրյան Վ., Ճգնաժամ. Մակրոտնտեսական իրավիճակն աշխարհում և Հայաստանում, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2010, էջ 151-203:

առանձին դիտարկվում է տրանսֆերտների փոփոխությունները որպես բնակչության աղբյուր, թեպետ այն համարվում է ճգնաժամի փոխանցման մեխանիզմ: Որպես ճգնաժամի սկիզբ այս հոդվածում ընդունվում է 2008թ. երրորդ եռամսյակը, երբ այն սկսվեց տարածվել այլ երկրների վրա, իսկ ճգնաժամի մակրոտնտեսական ազդեցությունը գնահատելիս դիտարկվելու են ճգնաժամից հետո արձանագրված փոփոխությունները:

Ճգնաժամից հետո գրանցած մակրոտնտեսական ազդեցության չափը սովորաբար փաստում է այն մասին, թե որքանով է երկիրը ճկուն եղել փոխանցվող ճգնաժամներից կամ շոկերից առաջ, դրանց բացասական ազդեցությունները կլանելու կամ չեզոքացնելու տեսանկյունից¹: Իսկ դրա առաջին ցուցանիշը ՀՆԱ-ի աճի տեմպն է:

2008թ. չորրորդ եռամսյակում նախորդ տարվա նույն եռամսյակի նկատմամբ գրանցվեց 5.9% անկում (աղյուսակ 1), իսկ տարեկան աճի տեմպը կազմեց 6.9% 2007թ. նկատմամբ: 2009թ. նախորդ տարվա համեմատ արձանագրեց ՀՆԱ-ի 14.2% անկում (4-րդ ամենախորը անկումն աշխարհում Լատվիայից (-18.01%), Ուկրաինայից (-15.1%) և Լիտվայից (-15.03%) հետո)²: Անկման հիմնական պատճառը շինարարության ծավալների 42.3% կրճատումն էր, իսկ սա նշանակում է, որ ՀՀ-ում նախքան ճգնաժամը տնտեսական հիմքը չի եղել դիվերսիֆիկացված (տնտեսական աճ պայմանավորված հիմնականում մի ոլորտից): Իսկ էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության և բաշխման, ինչպես նաև մշակող արդյունաբերության ոլորտներում համապատասխանաբար 13.3 և 8.8% անկում արձանագրվեց³, որը առաջինի դեպքում պայմանավորված էր արտադրական ծավալների կրճատմամբ տնտեսության այլ ոլորտներում, իսկ մշակող արդյունաբերության պարագայում՝ մի քանի հանգամանքով, որոնցից են՝ արտահանման կրճատում (օր.՝ «ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ» խմբում արձանագրվեց մոտ 45%⁴ անկում 2008թ. նկատմամբ), տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերի կրճատում (2.2%) ճգնաժամի հետևանքները հաղթահարելու նպատակով և այլն, ինչ էլ իր հերթին հանգեցրեց «Առևտուր, ավտոմեքենաների, կենցաղային արտադրատեսակների և անձնական օգտագործման իրերի նորոգում» ոլորտի 4% անկման՝ նախորդ տարվա նկատմամբ⁵:

2010թ. ՀՆԱ-ի աճը 2.6% կազմեց 2009թ. նկատմամբ, որը պայմանավորված էր արդյունաբերության և գործունեության ծառայությունների մատուցման բնագավառի աճով, որտեղ համապատասխանաբար՝ 6.9 և 4.4% աճ էր արձանագրվել, սակայն գյուղատնտեսության ոլորտում գրանցվեց 13.6%⁶ անկում: 2010թ. տնտեսական աճը հիմնականում պայմանավորված է եղել այն ոլորտների աճով, որոնք նախքան ճգնաժամը տնտեսության շարժին ուշ չէր համարվում, ինչը կարող է փաստել այն մասին, որ տնտեսության դիվերսիֆիկացման հիմքեր

¹ Bhaskaran, Manu and Ghosh, Ritwick. (2009), “Global Economic and Financial Crisis Impact on Developing Asia and Immediate Policy Implications”, prepared by the Centennial Group as discussion materials for the “Regional Forum on the Impact of Global Economic and Financial Crisis” a regional technical assistance (RETA No. 6508), funded by the Asian Development Bank (ADB). 4 January, pp. 12-17. <http://www.adb.org/Documents/events/2010/Global-Economic-Financial-Crisis/report-1.pdf> (last accessed: July 18, 2010)

² WB, WDI-Online 2011 (last accessed: March 23, 2011).

³ 2005թ.-ի միջին տարեկան գներով հաշվարկված: Աղբյուր՝ ՀՀ ԿԲ վիճակագրական առցանց տվյալներ, 2011: <http://www.cba.am/am/SitePages/statrealsector.aspx> (վերջին այցելություն՝ 2011թ. մարտի 24):

⁴ Աղբյուր՝ ԱՎԾ, 2011թ. Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2009 թվականին՝ Ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացուցակի 2-նիշ դասակարգման:

http://www.armstat.am/file/article/ft_2nish_09_8.pdf (վերջին այցելություն՝ 2011թ. մարտի 30):

⁵ Աղբյուր՝ ԱՎԾ առցանց տվյալների բազա, 2011թ. <http://www.armstat.am/am/?nid=246>:

⁶ Ընթացիկ ԱՄՆ դոլարով արտահայտված: Աղբյուր՝ ԱՎԾ, 2011թ. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2010թ. հունվար-դեկտեմբերին, http://www.armstat.am/file/article/sv_12_10a_111.pdf (վերջին այցելություն՝ 2011թ. մարտի 24):

են դրվում: Սակայն 2010թ. ՀՆԱ-ն դեռ չի հասել նախքան ճգնաժամային տարին գրանցված 2007թ. մակարդակին:

ՀՆԱ-ի այս անկման պարագայում հնարավոր էր ակնկալել գործազրկության մակարդակի աճ, աշխատավարձերի կրճատում կամ էլ առնվազն պահպանում, իսկ արժեզրկված դրամի պարագայում, երբ համաշխարհային շուկայում գների փոփոխությունը գերազանցում է տեղական արժույթի փոփոխությանը, գրանցվում է գնաճ, որի հետևանքով տեղի էր ունենալու իրական աշխատավարձերի նվազում:

Ըստ Ռեյնհարթի և Ռոգոֆֆի¹ միջինից բարձր եկամուտներ ունեցող զարգացող երկրներում աշխատավարձերի ավելի ճկուն լինելը մեղմում է զբաղվածության խնդիրը դժվար տնտեսական պայմաններում, իսկ սոցիալական ապահովության համակարգում² եղած տարբերությունները զարգացած երկրների հետ համեմատած, ըստ հեղինակների, հավանաբար նույնպես իրենց դերն են խաղում: Գործազրկության մակարդակը (աղյուսակ 3) 2008թ. չորրորդ եռամսյակում երրորդի նկատմամբ աճեց 0.1 տոկոսային կետով, իսկ 2010թ. առաջին եռամսյակում 2008թ. նկատմամբ աճել է մեկ տոկոսային կետով և տարեվերջին արձանագրվեց 7.0% գործազրկության մակարդակ (2010թ. տվյալները գնահատականներ են): Գործազրկության մակարդակի այս փոփոխությունը կարող էր փաստել երկու հանգամանքի մասին՝ կամ աշխատավարձերի ճկունություն է տեղի ունեցել, կամ էլ այլ հանգամանքներ են առկա: Իսկ դիտարկելով իրական աշխատավարձերի փոփոխությունները (2009թ. արձանագրված միջին իրական աշխատավարձը 2008թ. նկատմամբ աճեց 15.8% և կազմեց 92,862 ՀՀ դրամ (աղյուսակ 6), երբ 2009թ. գնաճը 6.5% էր (աղյուսակ 4)), կարելի է փաստել այն մասին, որ տեղի է ունեցել իրական աշխատավարձերի աճ, ինչը մատնանշում է ՀՀ-ում մի քանի հանգամանքի առկայության մասին՝

1. *ՀՀ-ում սուր կադրային խնդիր է նկատվում:* Գործատուները պատրաստ են բարձրացնել աշխատակիցների աշխատավարձերը իրենց պահելու համար, քանի որ երկար ժամանակ կպահանջվի նոր աշխատակից գտնելու, նրան վերապատրաստելու համար:
2. *Չգրանցված աշխատակիցների խնդիրը դեռևս առկա է:* Հեռանում են այն աշխատակիցները, որոնք գրանցված չեն և զբաղեցնում են ոչ կարևոր կամ բարձր հմտություններ ու կարողություններ պահանջող պաշտոններ, և սրան զուգահեռ տեղի է ունենում բարձր որակավորում ունեցող կամ էլ ընկերության համար կարևոր համարվող աշխատակիցների աշխատավարձերի բարձրացում:

Ինչ վերաբերում է գնաճին, ապա 2009թ. նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ գնաճը կազմել է 6.5% (աղյուսակ 4): Նույն ժամանակահատվածում միջին տարեկան փոխարժեքը 2008թ. նկատմամբ արժեզրկվեց մոտ 19% (աղյուսակ 7), մինչդեռ «հումք» ապրանքային խմբի բոլոր խմբերի գների ինդեքսի (ընթացիկ ԱՄՆ դոլարով) փոփոխությունը 2008թ. նկատմամբ կազմել էր -16.8%, իսկ ամբողջ «սնունդ» խմբինը՝ -8.5%³, հետևաբար գնաճ էր գրանցվելու: Իսկ 2010թ. նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ գնաճը կազմեց 9.4%:

Գնաճի, դրամի արժեզրկման, գործազրկության պարագայում տրանսֆերտների աճը կարող էր մեղմել ստեղծված իրավիճակը (բյուջեի եկամտային մասի կրճատման և կառավարության միջամտության բացակայության պարագայում), սակայն 2009թ. բավականին մեծ

¹ Reinhart, Carmen, and Rogoff, Kenneth (2009). This Time is Different: Eight Centuries of Financial Folly, Princeton University Press, Princeton, New Jersey: United States, pp. 228-229.

² Սոցիալական ապահովության համակարգը իր մեջ ներառում է հետևյալ ծրագրերը ու միջոցառումները՝ ընտանեկան նպաստներ, սնունդ աշխատանքի դիմաց ծրագրեր, սննդի կտրոններ, էլեկտրաէներգիայի և այլ կոմունալ ծառայությունների վարձավճարների դիմաց տրվող սուբսիդիաներ, հանրային աշխատանքներ և այլն:

³ Աղբյուր՝ «UNCTAD Commodity Price Statistics» առցանց տվյալների բազա, 2011 (վերջին այցելություն՝ 2011թ. սեպտ. 30):

անկում գրանցվեց տրանսֆերտների ծավալների մեջ 2008թ. նկատմամբ (աշխատողների եկամուտները՝ 27.1%, իսկ մասնավոր տրանսֆերտների ծավալների մեջ՝ 30.2%): ՀՀ միգրանտների 79%-ի համար շինարարությունն է եղել զբաղվածության աղբյուր 2009թ., իսկ 2009թ. ՌԴ մեկնող միգրանտների տոկոսն ընդհանուրի մեջ նվազել է 2008թ. նկատմամբ: Եվ, եթե 2008թ. ՌԴ մեկնող միգրանտների միայն 16% էր աշխատանք որոնելու նպատակով լքում ՀՀ, ապա 2009թ.՝ 22%¹, որի հետևանքով 2009թ. Ռուսաստանից դրամական փոխանցումների ծավալը (ԱՄՆ դոլարով արտահայտված) կրճատվեց 34%-ով (1,371 մլն ԱՄՆ դոլարից հասնելով 904 մլն)²: Այս անկման հիմնական պատճառը ՌԴ շինարարության ոլորտի 17.2 անկումն էր 2009թ. 2008թ. նկատմամբ³:

2010թ. առաջին 9 ամիսների ընթացքում 2009թ. համապատասխան ժամանակահատվածի նկատմամբ աշխատողների եկամուտները 14.6% անկում արձանագրեցին, իսկ մասնավոր տրանսֆերտներն աճեցին 13.2%-ով (նախնական տվյալների հիման վրա): Աշխատողների եկամուտների կրճատումը 2010թ. նախորդ տարվա նկատմամբ կարող է փաստել այն մասին, որ կամ պահանջարկն այն ոլորտներում, որտեղ ներգրավված են լինում ՀՀ ռեզիդենտները (հիմնականում շինարարություն) դեռ համեմատաբար ցածր է, կամ էլ այլ հանգամանքով է պայմանավորված (եկամուտների կրճատում և այլն): Իսկ մասնավոր տրանսֆերտների աճը կարող է փաստել այն մասին, որ Սփյուռքում ազգությամբ հայ ռեզիդենտների եկամուտները սկսել են աճել (այն ոլորտներում, որտեղ աշխատում են սփյուռքի ներկայացուցիչները պահանջարկը վերականգնվում է):

Նվազող տրանսֆերտների, տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերի պարագայում կառավարության միջամտությունը կարող էր մեղմել վիճակը: Սակայն ներմուծման և արտահանման կրճատման, վառարանող ընկերությունների ֆինանսական վիճակի պատճառով բյուջեի եկամտային մասին, կրճատումը բերելու էր նրան, որ ՀՀ կառավարությունը պետական պարտքի ավելացման միջոցով կկարողանար աջակցել մասնավոր ընկերություններին և ավելացնել սոցիալական ուղղվածության ծախսերը:

Ըստ Ռեյնհարթի և Ռոգոֆֆի⁴ տարբեր տիպի ճգնաժամերի միջև մեկ ընդհանրություն կա՝ պարտքի մեծ չափերի կուտակում (դիտարկվում է հեղինակների կողմից առաջարկող մոտեցումը⁵, պարտքի կումուլյատիվ աճ (պարտք/ՀՆԱ հարաբերության փոխարեն), քանի որ ՀՆԱ-ի կտրուկ անկման պարագայում պարտք/ՀՆԱ հարաբերության վերաբերյալ դժվար կլինի ճշգրիտ դատումներ անելը): 2008թ. երրորդ եռամսյակի նկատմամբ ՀՀ պետական ներքին պարտքը 2010թ. երրորդ եռամսյակի վերջում 79.9%-ով (աղյուսակ 5), իսկ արտաքին պետական պարտքը 110.9%-ով (ՀՀ ԿԲ-ի պարտքը՝ 241.5%-ով, իսկ ՀՀ կառավարության պարտքը՝ 95.4%-ով):

¹ Ersado, Lire. (2010), “The Global Economic Crisis, Migration, and Remittance Flows to Armenia: Implications for Poverty”, Presentation prepared for International Workshop on the Economic and Social Impact of Migration, Remittances, and Diaspora, Yerevan, Armenia, June 24-25. http://www.edrc.am/WP/migration/june25/Ersado_Eng.ppt (last accessed: March 15, 2011).

² Gabrielyan, Vache (2010), “Remittances in Armenia: Stylized Facts and Theories in Progress”, Presentation prepared for International Workshop on the Economic and Social Impact of Migration, Remittances, and Diaspora, Yerevan, Armenia, June 24-25. http://www.edrc.am/WP/migration/june24/Gabrielyan_Eng.ppt (last accessed: March 23, 2011).

³ Федеральная служба государственной статистики, Национальные счета России в 2002 - 2009 годах. 2010г. http://www.gks.ru/bgd/regl/b10_15/IssWWW.exe/Stg/%3Cextid%3E/%3Cstoragepath%3E::%7C2.5.6.xls (последний визит: март 23, 2011г.)

⁴ Reinhart, Carmen, and Rogoff, Kenneth (2009). This Time is Different: Eight Centuries of Financial Folly, Princeton University Press, Princeton, New Jersey: United States, p. xxv.

⁵ Reinhart, Carmen, and Rogoff, Kenneth (2009). This Time is Different: Eight Centuries of Financial Folly, Princeton University Press, Princeton, New Jersey: United States, pp. 231-232.

Աղյուսակ 1

ՀՆԱ-ի աճի տեմպերը 2006-2010թթ.

(մլն ՀՀ դրամ)

	2006			2007			2008			2009			2010		
	ՀՆԱ-ն ընթացիկ գներով	ՀՆԱ-ն նախորդ տարվա համապ. ժամանակ. գներով	Իրակ. ծավալի ինդեքս. նախորդ տարվա համապ. ժաման. նկատ.%,	ՀՆԱ-ն ընթացիկ գներով	ՀՆԱ-ն նախորդ տարվա համապ. ժամանակ. գներով	Իրակ. ծավալի ինդեքս. նախորդ տարվա համապ. ժաման. նկատ.%,	ՀՆԱ-ն ընթացիկ գներով	ՀՆԱ-ն նախորդ տարվա համապ. ժամանակ. գներով	Իրակ. ծավալի ինդեքս. նախորդ տարվա համապ. ժաման. նկատ.%,	ՀՆԱ-ն ընթացիկ գներով	ՀՆԱ-ն նախորդ տարվա համապ. ժամանակ. գներով	Իրակ. ծավալի ինդեքս. նախորդ տարվա համապ. ժաման. նկատ.%,	ՀՆԱ-ն ընթացիկ գներով	ՀՆԱ-ն նախորդ տարվա համապ. ժամանակ. գներով	Իրակ. ծավալի ինդեքս. նախորդ տարվա համապ. ժաման. նկատ.%,
I եռամսյակ	266145.5	268715.6	108.0	422193.7	400414.4	112.1	509579.1	477119.0	113.0	488771.0	478500.3	93.9	555520.1	515285.4	105.4
II եռամսյակ	543403.8	526355.3	114.0	682543.3	649962.8	110.1	784606.9	748123.8	109.6	655693.0	644087.0	82.1	724902.9	699756.7	106.7
III եռամսյակ	910513.7	841063.5	113.2	1028875.7	993959.4	115.7	1249441.1	1186915.1	115.4	971576.3	1002138.4	80.2	1053813.4	940675.1	96.8
IV եռամսյակ	944973.6	907712.7	114.9	1015670.7	977058.1	115.0	1024600.5	955926.8	94.1	986774.8	938593.7	91.6			
Տարեկան	2665036.6	2543847.1	113.4	3149283.4	3021394.7	113.7	3568227.6	3368084.7	106.9	3102815.1	3063319.4	85.8	3509624.8		102.6
Աղբյուր՝ ԱՎՃ, տարբեր տարիների հրապարակումներ, Նշում՝ * շեղատառ նշվածները նախնական տվյալներ են:															

Աղյուսակ 2

Արտաքին հատվածի մակրոտնտեսական ցուցանիշները 2006-2010թթ.

(մլն ԱՄՆ դոլար)

Մակրոտնտեսական ցուցանիշներ	2006					2007					2008					2009					2010				
	I եռ.	II եռ.	III եռ.	IV եռ.	Տար.	I եռ.	II եռ.	III եռ.	IV եռ.	Տար.	I եռ.	II եռ.	III եռ.	IV եռ.	Տար.	I եռ.	II եռ.	III եռ.	IV եռ.	Տար.	I եռ.	II եռ.	III եռ.	IV եռ.	Տար.
ՀՀ բանկերի միջոց. ֆիզիկ. անձ. անուն. արտերկրյան- րից մուտք եղած ընդամենը ամսական փոխանցում*.	256.7	287.0	361.1	392.4	1297.2	269.5	396.7	513.4	562.6	1742.2	365.3	570.0	648.5	686.8	2270.6	261.8	337.4	544.6	431.9	1575.7	261.7	355.2	484.4	525.8	1627.1
Ապրանքների արտահանում	184.8	252.7	242.8	323.7	1004.0	231.2	293.9	303.8	323.4	1152.3	234.0	285.9	302.1	235.1	1057.2	120.8	163.3	205.9	220.1	710.2	197.0	245.9	262.5	306.1	1011.4
Ապրանքների ներմուծում	422.0	526.6	557.7	688.1	2194.4	645.2	714.5	826.8	1081.3	3267.8	846.8	1055.2	1220.2	1303.8	4426.1	613.8	771.5	861.9	1073.9	3321.1	777.8	946.2	954.4	1104.5	3782.9
Աշխատողների եկամուտներ	135.2	143.3	164.2	133.3	576.0	120.2	168.3	221.0	233.2	742.7	156.8	226.2	291.4	254.8	929.2	119.7	161.7	192.6	202.9	677.0	87.8	132.3	184.8		404.9**
Մասնավոր տրանսֆերտներ	91.8	174.4	210.4	233.2	709.7	148.4	208.1	275.6	295.5	927.6	193.0	285.2	359.3	323.7	1161.3	138.3	193.7	233.0	245.8	810.8	146.6	211.0	282.2		639.8**
Սփյուռքից տրանսֆերտներ	79.2	151.8	180.0	197.1	608.0	126.2	179.0	238.8	254.4	798.4	167.2	247.6	331.7	278.6	1025.1	119.0	166.6	198.1	211.6	695.3					
Աշխատողների դրամական փոխանցումներ	11.5	16.7	22.0	24.1	74.4	14.7	21.3	28.4	30.0	94.4	19.7	30.3	40.6	33.0	123.6	13.8	20.4	25.7	25.9	85.8					
Աղբյուր՝ ԱՎՃ, տարբեր տարիների հրապարակումներ, *Նշում՝ www.cba.am **Նշում՝ 2009թ. 9 ամիսների տվյալներ, չեղատառ նշվածները նախնական տվյալներ են:																									

Աղյուսակ 3

Գործազրկության մակարդակը 2006-2010թթ.

	2006	2007	2008	2009	2010
I եռամսյակ	7.7	7.4	6.3	6.7	7.3*
II եռամսյակ	7.6	7.2	6.3	6.9	7.2*
III եռամսյակ	7.4	6.8	6.2	7.1	7.1*
IV եռամսյակ	7.4	6.6	6.3	7.1	7.0*
Տարեկան	7.5	7.0	6.3	7.0	7.0*
Աղբյուր՝ ԱՎԾ, տարբեր տարիների հրապարակումներ, * գնահատական, սեփական հաշվարկ:					

Աղյուսակ 5

ՀՀ պետական պարտքի ցուցանիշները 2006-2010թթ.

	Ներքին պետական պարտք, ընդամենը (մլն. ՀՀ դրամ)	Արտաքին պետական պարտք, ընդամենը (մլն. ԱՄՆ դրամ)	ՀՀ ԿԲ պարտք (մլն. ԱՄՆ դրամ)	ՀՀ կառավարության պարտք (մլն. ԱՄՆ դրամ)	Հատուկ ծրագրեր (մլն. ԱՄՆ դրամ)
31.03.2006թ.	52326.7	1110.352	172.963	932.024	3.267
30.06.2006թ.	55219.8	1163.395	171.256	986.525	3.517
30.09.2006թ.	55820.5	1173.079	168.417	999.753	3.861
30.12.2006թ.	57962.8	1205.635	163.671	1036.863	4.052
31.03.2007թ.	55457.6	1222.7	162.116	1056.517	4.067
30.06.2007թ.	58701.6	1266.818	158.315	1104.183	4.32
30.09.2007թ.	61761.2	1321.177	164.472	1152.432	4.272
30.12.2007թ.	66303.2	1321.177	167.054	1277.355	4.715
31.03.2008թ.	85515.5	1551.623	172.821	1374.141	4.661
30.06.2008թ.	85109	1550.279	167.319	1378.473	4.489
30.09.2008թ.	91939	1530.9	161.973	1364.432	4.495
30.12.2008թ.	100893.2	1577.106	151.903	1420.775	4.428
31.03.2009թ.	96117.1	1788.739	415.543	1369.503	3.693
30.06.2009թ.	113428.6	2433.415	447.795	1981.848	3.772
30.09.2009թ.	140765.8	2720.54	459.239	2257.772	3.529
30.12.2009թ.	149649.8	2966.677	500.756	2462.333	3.588
31.03.2010թ.	150955.4	2980.926	519.874	2461.051	
30.06.2010թ.	146475.7	3027.406	519.697	2507.71	
30.09.2010թ.	165368.9	3228.067	553.087	2674.98	
Աղբյուր՝ ԱՎԾ, տարբեր տարիների հրապարակումներ:					

Աղյուսակ 4

Սպառողական գների ինդեքսը 2006-2010թթ.

	2006	2007	2008	2009	2010
I եռամսյակ	102.8*	102.0	105.2	100.7	102.9
II եռամսյակ	101.5	101.9	103.1	104.5	101.6
III եռամսյակ	98.0	96.1	97.5	97.6	100.2
IV եռամսյակ	102.8	106.8	100.9	103.7	104.5
Տարեկան	105.2	106.6	105.2	106.5	109.4
Աղբյուր՝ ԱՎԾ, տարբեր տարիների հրապարակումներ:					
*Նշում՝ եռամսյակի վերջին ամիսը նախորդ եռամսյակի վերջին ամսվա համեմատ:					

Աղյուսակ 6

ՀՀ միջին աշխատավարձերը 2006-2010թթ.

	2006	2007	2008	2009	2010
I եռամսյակ	58413	69127	84093	95929	102712
II եռամսյակ	63532	73967	89946	99386	106182
III եռամսյակ	64956	78331	93260	102149	108688
IV եռամսյակ	72311	88596	102735	112235	117294**
Տարեկան	62293	74227	87406	96019	108852*
Տարեկան իրական	60538	71099	80189	92862	
Աղբյուր՝ ԱՎԾ, տարբեր տարիների հրապարակումներ, * գնահատական, ** գնահատական, սեփական հաշվարկ:					

Աղյուսակ 7

ՀՀ միջին փոխարժեքը (ԱՄՆ դոլար) 2006-2010թթ.

	2006	2007	2008	2009	2010
I եռամսյակ	450.95	359.44	308.05	325.56	384.08
II եռամսյակ	436.78	353.97	307.11	370.53	384.33
III եռամսյակ	402.39	337.83	302.30	372.64	365.51
IV եռամսյակ	374.04	317.08	306.41	384.40	360.73
Տարեկան	416.04	342.08	305.97	363.28	373.66
Աղբյուր՝ ԱՎԾ, տարբեր տարիների հրապարակումներ:					

ՀՀ ԿԲ-ի պարտքը կտրուկ ձևով աճ արձանագրեց 2009թ. առաջին եռամսյակին՝ նախորդ եռամսյակի նկատմամբ աճելով 173.6%-ով և 2009թ. հունվար ամսվա նկատմամբ մարտին գրանցվեց 19.7% ՀՀ դրամի արժեզրկում ԱՄՆ դոլարի նկատմամբ¹: ՀՀ պետական արտաքին պարտքը 44.6% աճեց 2009թ. երրորդ եռամսյակին նախորդ եռամսյակի նկատմամբ, իսկ ՀՀ ներքին պետական պարտքի կտրուկ մեծացումն արձանագրվեց 2009թ. առաջին և երկրորդ եռամսյակների ընթացքում՝ 2008թ. չորրորդ եռամսյակի նկատմամբ, երբ կառավարությունը սկսեց ակտիվ միջամտել և իրականացնել հակաճգնաժամային միջոցառումներ:

Այսպիսով՝ ճգնաժամը բացասաբար ազդեց ՀՀ մակրոտնտեսական վիճակի վրա՝ ուղեկցվելով իրական ՀՆԱ-ի կտրուկ կրճատմամբ, ինչպես նաև պետական պարտքի մեծ չափերի հասնող կումուլյատիվ կուտակմամբ հակաճգնաժամային միջոցառումներ իրականացնելու համար՝ նվազող ՀՀ պետական բյուջեի եկամուտների պարագայում: Գործազրկության մակարդակը կտրուկ փոփոխություններ չարձանագրեց, իսկ միջին իրական աշխատավարձերը նույնիսկ աճ արձանագրեցին, որը, թերևս, կարող է պայմանավորված լինել ՀՀ-ում առկա սուր կադրային խնդիրներով կամ այլ հանգամանքներով: Իսկ այս խորը անկման հիմնական պատճառը երկրի ոչ բարձր ճկունության կամ դիմադրողականության աստիճանն էր արտաքին շուկերի հանդեպ 2008թ., և համապատասխան ճգնաժամների ազդեցությունը չեզոքացող կամ կլանող գործոնների բացակայության պարագայում ճգնաժամը այդպիսի մեծ մակրոտնտեսական հետևանքներ բոլեց:

ԼՈՒՍԻՆԵ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գիտաշխատող*

ՀԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԱՆՈՒՂԱԿԻ ՀԱՐԿԵՐԻ ՄԱՍՈՎ

ՀՀ-ում իրականացվող հարկային քաղաքականությունը բարեփոխման կարիք ունի, այդ մասին են վկայում հարկման սկզբունքների, ինչպես նաև արդյունավետության պահանջների ոչ լիարժեք հաշվառումը:

Ըստ էության, հարկային քաղաքականության սկզբունքները ձեռք են բերել նոր տեսակ և ուղեկցվում են նոր պահանջներով: Ընդ որում, դրանք հաճախ արտահայտում են պատմականորեն ձևավորված տեսությունների այս կամ այն տարատեսակը:

Փորձենք գնահատել հարկային քաղաքականության արդյունավետությունը անուղղակի հարկերի մասով:

ԱԱՀ: Ավելացված արժեքի հարկը կազմում է պետական բյուջեի հարկային եկամուտների գերակշիռ մասը և, բնականաբար, մեծ դեր ու նշանակություն ունի պետական ֆինանսների ձևավորման, բաշխման ու վերաբաշխման գործում: Դա պայմանավորված է ԱԱՀ-ի հաշվարկման ու գանձման այն մոտեցումներով, որոնք ընդգծված ֆիսկալային բնույթ են հաղորդել այդ հարկատեսակին: ԱԱՀ-ի ֆիսկալային գործառնության վրա դրականորեն են ազդում.

- ԱԱՀ-ի չհարկվող շեմի ցածր մակարդակը, որն ի սկզբանե սահմանվել է 1 մլն դրամ, 1999թ. հունվարի 1-ից դարձվեց 3 մլն դրամ, իսկ 2009թ. հունվարի 1-ից՝ 58.35 մլն դրամ:

¹ Աղբյուր՝ ՀՀ ԿԲ վիճակագրական առցանց տվյալներ, 2011: <http://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx> (վերջին այցելություն՝ 2011թ. մարտի 24):